



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԱՏԱՐՈՂ  
Տ. ՄԻՄՈՆՅԱՆ



« 04 » 05 2021թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ

0085-21

**Ձեռնարկողը՝**

**«Ջանգեգուր պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ**

Քաջարան, Լեռնագործների փող, 18 շենք

**Գործունեությունը՝** Կապան համայնքում նախատեսվող անտառապարման  
և անտառավերականգնման աշխատանքների շրջակա  
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման  
հայտ

Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պաշտոնակատար՝



Գ. Գևորգյան

Առդիր՝ 5 թերթ



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0085-21  
<04> 05 2021թ.

**Սյունիքի մարզի Կապան համայնքում նախատեսվող  
անտառապատման և անտառովերական գնման աշխատանքների շրջակա  
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր**

Ձեռնարկող՝ «Զանգեզուր պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հայտ /Գ կատեգորիա/  
Տեղադրման վայրը՝ Սյունիքի մարզ, Կապան համայնք

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 5-րդ կետի ա) ենթակետի՝ անտառապատումը որպես անտառային տնտեսության բնագավառի գործունեություն դասակարգվում է որպես «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

**Ներածական մաս** Նախատեսվող գործունեության նպատակն է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/, անտառային ծածկույթի հատմամբ՝ տնտեսությանը հասցված վնասի հատուցման աշխատանքների շրջանակներում չորս տարբեր տարածքներում (հարթակներում) իրականացնել անտառապատում: Անտառապատման համար Կապան խոշորացված համայնքից ընտրված տարածքներից մերկացած ժայռերով լանջեր են, իսկ մյուս երկուսը՝ քսերոֆիտ նոսր թփուտներ, որտեղ հնարավոր է կատարել ծառապատման ու անտառապատման աշխատանքներ: Նախագծված ընդհանուր 20 հա տարածքը բաղկացած է 4 տեղամասերից: Դիտարկվող տարածքի երկրաբանական պայմանները բավարար են աշխատանքների իրականացման համար: Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը՝ պայմանավորված ռելիեֆով և երկրաբանական կտրվածքով, համարվում է թույլ ինֆիլտրացիոն գոտի: Ստորերկրյա ջրերի մակարդակը նախագծվող տարածքում գտնվում է մեծ խորությունների վրա (80-100 մ): Ֆիզիկա-երկրաբանական երևույթները արտահայտված են մայր ապարների հողմնահարմամբ: Տարածքը բնութագրվում է լեռնային դարչնագույն և անտառային հողերի տիպերով:

**Տեղամաս 1-ը** Կապան քաղաքի վարչական սահմանում գտնվող 1,5 հա տարածքն է, որը գտնվում է Ողջի գետի ձախ ափին՝ ծովի մակերևույթից մոտ 800-880 մ միջին բարձրության վրա, լանջի միջին թեքությունը մոտ 50-60° է, կողմնադրությունը՝ հարավային: Այն ունի 156 մ մաքսիմալ երկարություն և մոտ 137 մ բարձրություն: Տեղամասում նախատեսվում է կառուցել յուրաքանչյուրը՝ 4.7 մ (5.3 մ) հեռավորությամբ 30 հորիզոնական շարքեր, որոնցում յուրաքանչյուր 0.5, 0.7 և 1.0 մետր հեռավորությունների վրա կտնկվեն տվյալ կլիմային և տվյալ լանջի կտրուկ թեքությանը համապատասխան ծառեր և թփեր: 3349մ երկարությամբ դարավանդների 30 շարքերում նախատեսվում է տնկել 8 տեսակ ծառ և թուփ, ընդհանուր՝ 5131 հատ:

**Տեղամաս 2-ը** Կապան քաղաքի վարչական սահմանում գտնվող 0,5 հա տարածքն է, որը գտնվում է Ողջի գետի ձախ ափին՝ ծովի մակերևույթից 800-840 մ միջին բարձրության վրա՝ Դավիթ Բեկի փողոցից վեր մերկացած լանջին: Լանջի միջին













- անտառային ծածկի ծառերի հատման բացառում, հատելով բացառապես թփուտային տեսակները, որոնք հետագայում կարող են ինվազիվ ազդեցություն ունենալ նոր տնկիների համար:

Անտառատնկման աշխատանքների ավարտից հետո նախատեսված է իրականացնել մշտադիտարկումներ, որոնք կվերաբերեն՝ *հողային ռեսուրսների հնարավոր փոփոխություններին*, վվայրի բույսերի և կենդանիների տեսակային բազմազանության ուսումնասիրությանը /վտանգված բույսերի և կենդանիների տեսակային կազմ/, տնկարկների վնասատուներով և հիվանդություններով վարակվածությանը, հողերի էռոզիայի աստիճանի փոփոխությանը և այլն/: Մշտադիտարկումն իրականացվելու է երկրորդ տարվանից սկսած, նախնական հաշվարկներով երեք տարվա համար պահանջվող ծախսերը ըստ նախահաշվի ընդհանուր գնահատվել է 5,88 մլն. ՀՀ դրամ:

**Պարճառաքանական մաս.** նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Կապան քաղաքում անցկացված հանրային քննարկումների ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, արտակարգ իրավիճակների, պաշտպանության նախարարություններից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ Ընկերության կողմից անտառապատման ծրագրի իրականացումն ունի իր կարևորությունը: Չորս տեղամասերում տարատեսակ տնկիների միջոցով նախատեսվող անտառավերականգնումը բացառապես դրական կազդի տարածաշրջանի կենսամիջավայրի վրա: Անտառապատման և անտառվերականգնման աշխատանքները կունենան դրական բնապահպանական և սանիտարական նշանակություններ /ջրապաշտպանական, կլիմայակարգավորիչ և այլն/: Անտառային մշակույթները կնվազեցնեն փոշու պարունակությունը օդում, մեղմացնելով միկրոկլիման, նվազեցնելով օդի չորությունը: Աշխատանքների արդյունքում որակապես վերականգնվի և կբարելավվի հողային ծածկույթը և տեղամասերի բուսական աշխարհը: Ստեղծելով մեկ միասնական անտառ կամ անտառաշերտեր, կենսաբազմազանության մաս կազմող բույսերը և կենդանիները կկարողանան կայուն ձևով գոյատևել, կենդանիները անարգել կարող են կատարել միգրացիաներ՝ համայնքի տարբեր անտառահատվածներում:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր և կարճաժամկետ բնույթ և կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների և անտառապատման համար առաջարկվող արդյունավետ միջոցառումների իրականացմամբ:

### Փորձաքննական պահանջներ

Անտառապատման աշխատանքների հետ կապված, որպես կարևորագույն պահանջներ անհրաժեշտ է՝

- Անտառապատման աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվել ՀՀ Կառավարության 2013թ հունիսի 27-ի թիվ 684-Ն որոշման և անտառային օրենսգրքի 30-րդ հոդվածի պահանջներով /որի հրահանգները հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը/, ներկայացնելով նշված իրավական ակտերով սահմանված անտառատնկման, անտառապահպանության աշխատանքների կազմակերպման և ծրագրերի համապատասխանության վերաբերյալ տեղեկատվություն:



- Ըստ անհրաժեշտության և կիրառելիության առաջնորդվել ՀՀ կառավարության 2014թ.-ի հուլիսի 31-ի ՀՀՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշման պահանջներով:

- Առաջին 4 տարում իրականացնել ագրոտեխնիկական խնամքի միջոցառումներ /քաղիան, փխրեցում, խոտհունձ, ջրում, սանիտարական հատումներ/ ըստ տարիների և աշխատանքների տեսակների՝ ապահովելու համար տնկիների կաշտողականությունը և պաշտպանվածությունը:

- Ծրագրի շրջանակներում ըստ անհրաժեշտության իրականացնել կրծողների դեմ պայքարի միջոցառումներ:

- Բացառել անտառտնկման աշխատանքներում ինվազիվ բույսերի ներառումը, քանի որ վերջիններս կարող են բացասաբար անդրադառնալ հարակից կենսաբազմազանության վրա:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Զանգեզուր պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ կողմից ներկայացված Կապան համայնքում նախատեսվող անտառապատման և անտառվերականգնման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝

Հ. Մկրտչյան

